

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ



Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлис, редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).
Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիզուով.
Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳԻՐԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Վշտահար Սարգիս Յովհաննէսեան և Նատալիա Ղազարեան Տէր-Օհաննէսեանները
արտի դաժնութեամբ յայտնում են ծանօթներին և ազգականներին, առաջին թանգա-
գին և անմոռանալի աներոջ և երկրորդի հօր
ՂԱԶԱՐ ՍԻՄԵՕՆԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ
մահը: Ամբիճըր ամեն օր, երեկոյեան ժամը 7-ին: Յուզարկաւորութիւնը կիրակի, մա-
յիսի 15-ին, առաւօտեան ժամը 10-ին: (ո. շ. կ.) 2—3

Վշտահար Սրբուհի Միսոնեան իր զաւակներով՝ Սարգիս, Բախշօ, Սեդրակ Ղազա-
րեանները հետ և հարսներով՝ Վառվառէ Արքայազնեան և Ալեքսանդրա Գեորգեան
Յարութիւնեանները խորին վշտով յայտնում են ազգականներին և ծանօթներին, ա-
ռաջինը իր թանգակին և անմոռանալի ամուսնու, երկրորդները իրանց հօր, իսկ վեր-
ջինները սկեսրայր
ՂԱԶԱՐ ՍԻՄԵՕՆԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ
մահը: Ամբիճըր ամեն օր, երեկոյեան ժամը 7-ին: Յուզարկաւորութիւնը կիրակի,
մայիսի 15-ին, առաւօտեան ժամը 10-ին սեփական տնից (7 ըր քաղաքամաս, Վախ-
տանգովսկի փող. № 9) դէպի Կարմիր Աւետարան եկեղեցին, իսկ այնտեղից Խօշի-
վանքի գերեզմանատուն: (ո. շ. կ.) 2—3

Վշտահար Յովհաննէս Եփրեմեան և Վնյա Ղազարեան Օհաննէսները հոգեկան
վշտով յայտնում են ազգականներին ծանօթներին առաջինի անմոռանալի և թան-
գազին աներոջ և երկրորդի հօր
ՂԱԶԱՐ ՍԻՄԵՕՆԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ
մահը: Ամբիճըր ամեն օր, երեկոյեան ժամը 7-ին: Յուզարկաւորութիւնը մայիսի 15-ին
կիրակի օրը, առաւօտեան ժամը 10-ին: (ո. շ. կ.) 2—3

ԲՈՎԱՆԴԱԳՈՐԾԻՒՆ
Պատճառները. Վերջին տեղեկութիւնները.—
Ներքին Տնօրէնութիւն. Նախընտանիքի գեղերը.
Բաց նամակ հայ կաթողիկոսներին. Սև ուրուա-
կանը. Կրթական գործը Շուշում. Նամակ Ա-
խալայի. Ներքին լուրեր.—ԱՐՏԱԲԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Կ. Պօլսի հայոց պարոնները.—ՀԵ-
ՌԱԳՐԱՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԵՐԻ:

Պ Ա Տ Ճ Ա Ռ Ն Ե Ր Ը

Հասարակական և քաղաքական երևոյթ-
ւոյնքի քննութեան ժամանակ մենք շատ
մեծ նշանակութիւն ենք տուել տնտե-
սական հայեցակէտերին և արտադրու-
թիւն ունենք այդ հայեցակէտը համարե-
լու ամենախոշոր գործոններից մէկը մեր
երկրի ազգաբնակչութեան զանազան խա-
ւեր փոխադարձ յարաբերութիւնների
մէջ: Սակայն մենք պարտաւոր ենք գրում
բողոքել այն դէպքերի դէմ, երբ տնտե-
սական հայեցակէտ հրատարակելով, կա-
մենում են միջնացնել մի շարք երևոյթ-
ւոյնք, որոնց հետ մենք գործ ունենք մեր
իրականութեան մէջ:
Եթէ օրինակ սրկինի և շիա աղանդնե-
րի պատկանող մասնաբաժանները մի-
մեանց հետ հաշտ չեն, մենք ամենևին չենք
վերադրել այդ երևոյթը տնտեսական պատ-
ճառներին: Եթէ մի ժամանակ հայ լուսա-
ւորչականների, հայ կաթողիկոսների և հայ
բողոքականների յարաբերութիւնները լա-
ւած էին և տեղի ունէին անախորժ բա-
նակութիւններ և նոյն իսկ ընդհարումներ,
մենք լաւ գիտենք, որ տնտեսական հա-
յեցակէտը այդտեղ ազդեցիկ դեր չէր կա-
տարում: Եթէ մայրենի լեզուի, ուսուց-
ման եղանակի և ուրիշ այդ տեսակ խն-
դիրների վերաբերութեամբ ծագում էին
անախորժութիւններ, մենք լաւ գիտենք,
որ այդտեղ տնտեսական շարժառիթներ
չը կային ամենևին, այլ բոլորովին ուրիշ
ընկալութեան հանգամանքներ:
Վերջին ժամանակներս մենք նկատում
ենք մի փորձ բացատրելու Բագուի մէջ
տեղի ունեցած անախորժ դէպքերը տն-
տեսական հիմունքներով և տնտեսական
շարժառիթներով: Եւ առաջին անգամից
կարող է այդպիսի մի փորձի ձեռնար-
կումը հաւանութեան արժանանալ, որով-
հետ Բագուն շատ խոշոր տնտեսական

մի կենտրոն է և անկասկած տնտեսական
հանգամանքները առհասարակ շատ մեծ
դեր են կատարում այդ շրջանում: Բայց
Բագուի այն ծանր դէպքերը, որոնք ար-
տայայտվեցին երկու ազգութիւնների
ընդհարումներով, շատ քիչ կախում ու-
նեն տնտեսական հանգամանքներից: Եւ
ի հարկէ ամեն մի սխալ բացատրութիւն
ոչ թէ կօշնէ մեր առաջ դրած կնճոտ
հարցի լուծման, այլ ընդհակառակը խո-
չընդդդում կը հանդիսանայ շուտով պարզե-
լու ճշմարտութիւնը և նպատակայարմար
միջոցներ կազմելու ծանր դրութիւնը
վերացնելու համար:
Բագուն ինքը նոր քաղաք է և նրա
ազգաբնակչութեան մեծագոյն մասը, թէ
մասնաբաժան և թէ քրիստոնեայ, եկեղ-
ր են զանազան տեղերից: Մասնաբաժաննե-
րը թէ ըսելի և թէ եկեղ-ր մեծապէս շահ-
վել են Բագուի զարգացումից և մի քա-
նի հանգամանքներում աւելի քան հայե-
րը: Օրինակ տնտեսքերը մեծ մասամբ
մասնաբաժաններ են և Բագուի ազգա-
բնակչութեան աճումից մեծ մասամբ օգ-
տվել են մասնաբաժանները: Ուրեմն մա-
սնաբաժանների այդ դասակարգը ամեն-
ւին առիթ չունէր արտաշարել և իրան
փնտրել համարելու մրցութիւնից:
Եթէ վերցնենք մանր խանութայաննե-
րին, մենք կը տեսնենք, որ թէ մասնա-
բաժանները և թէ քրիստոնեաները տալիս
են մեծ քանակութեամբ խանութայաննե-
րը, և յամենայն դէպս ուսուցիչներ մը-
թերքների վաճառանոցը աւելի նպատա-
ւոր է եղել մասնաբաժաններին, քան քրի-
ստոնեաներին համար: Եթէ հաշիւ առնենք
բանւոր դասակարգը, մենք կը տեսնենք,
որ Բագուն տալիս է ամեն ազգութիւն-
ներին մշակներ և սրանք ոչ միայն մի-
մեանց հետ թշնամի չեն եղել, այլ շատ
անգամ միասին գործել են և միաբերան
պահանջներ յայտնել:
Ինչ վերաբերում է նաւթագործներին,
և առհասարակ վաճառականներին, այդ-
տեղ քրիստոնեաների թիւը համեմատա-
բար աւելի մեծ է, բայց յամենայն դէպս
մասնաբաժանների մէջ նաւթագործների
և վաճառականների այնպիսի մի խոշոր
թիւ կայ, որ խօսք չէ կարող լինել բա-
ցառիկ դրութեան մասին:
Տնտեսական հայեցակէտը մեզ չէ կա-

րող ներկայացնել այնպիսի հիմունքներ,
որոնցով մենք կարողանայինք բացա-
տրել այդ ծանրակշիւ հարցը, որ դրված
է հրապարակի վրա: Եւ եթէ տնտեսա-
կան հանգամանքները որ և է դեր կատա-
րում են կենսի մէջ, նրանք այնքան
չնշին են ներկայ հարցի վերաբերմամբ,
որ նրանց պէտք է դէն ձգել հայ-թուր-
քական յարաբերութիւնների լուծման
խնդրում:

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԳՈՒԹԻՒՆՆԵՐ
(Սեփական թղթակցից)
Երեւան, 13 մայիս, առաւօտեան ժամը 9 և
22 րոպէին.
«Երեկոյեան ստացայ Նախընտանիքի հե-
տեւալ հեռագիրը, առաւօտից խմած.
«Սկսվեցին անկարգութիւնները. թալա-
նում են, սպանում, այրում: Այսօր Երևանից
ուղարկվեցին նոր շինվող երկաթուղիով
մի բառալիւծ զինուոր, իսկ երէկ ուղարկ-
վեցին կազակները»:

Մուշեղեան
Երեւանից մեզ հեռագրում են. մայիսի 13-ից,
երեկոյեան 3 ժամ 25 րոպէին.

«Նախընտանիք ստացայ հեռագիր հե-
տեւալ բովանդակութեամբ: Քաղաքում
կողոպտեցին հայերի խանութները: Սպա-
նեցին, այրեցին, վերաբերեցին մօտ հարիւր
մարդ: Սկսվեց յուզումը: Զահուկ գիւ-
ղում, Կարախանէզլուում և քաղաքի
թաղաքէնք արուարձանում: Դրութիւնը
կրիտիկական է»:

Մուշեղեան
(Մասնաւոր հեռագիրները)
Թիֆլիսում ստացված մի մասնաւոր
հեռագիր հաղորդում է հետեւեալը Հին-
Նախընտանիք, մայիսի 13-ին, երեկոյեան
7 ժամ 57 րոպէին. «Մագազինները կո-
ղոպտեցին և այրեցին բազարը: Մենք
բոլորս ողջ-առողջ ենք»:

Պօղոսեաններ
Նախընտան մայիսի 13-ին.
Մագազինները կողոպտված և այրված
են: Դրութիւնը վտանգաւոր է: Զոհերի
թիւը անյայտ է:

Նախընտան մայիսի 12-ին.
Տեղի ունի կոտորած և կողոպուտ,
բռնկվեց նաև հրդեհ:

Հին-Նախընտանիք, մայիսի 9-ից նամակով
մեզ գրում են. «Դրում եմ ծանր տագնապութեան
տակ: Մայիսի 6-ի և 7-ի—մի թուրքի և մի
հայի սպանութիւնից յետոյ, (որ արդէն իր
ժամանակին հաղորդած եմ), 8 ին վերաւոր-
վեց և մի ուրիշ հայ թուրքերի ձեռքով: Հէնց
նոր լուր ենք ստանում, որ Ճահուկ գիւղից
դէպի Նախընտան եկող թուրքերից երկուսը
սպանվում են հայերից, (որպէս թէ, որովհետև
դեռ ստոյգ ոչինչ չը կայ): Թուրքերի յուզումը
իր գագաթնակէտին է հասել: Բայց առ քաղ-
սպանվում է ընդհարումների: Փակված են
հայերի և թուրքերի խանութները: Թուրքերը
խուժել խուժել սկսել են ման գալ և զրգուում
են իրանց հայրենակիցներին ընդդէմ հայերի:
Փողոցները դատարկվեցին: Թուրքերը կառե-
րով և ոտով գնացին այն կողմը, որտեղ սպա-
նվել են թուրքերը: Սպանութեան վայրը հայա-
բնակ Շրջամահում գիւղի սահմանում է»:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ
ՆԱԽԵՆՏԱՆԻ ԴԵՊԵՐԸ
(Պաշտօնական)
Մայիսի 10-ին Նախընտանում մի հայ սպա-
նեց մի թուրքի: Մասնաբաժաններն էլ իրանց

կարգին սպանեցին հային: Այդ պատճառով
քաղաքում ծայրայեղ լարված դրութիւն ստեղծ-
վեց և երկու ազգութիւնները զինված անձերի
մէջ ընդհարումներ սկսվեցին, որ անհրաժեշտ
դարձրեց այնտեղ ուղարկել Երևանի փոխ-նա-
հանգապետին, որի հետ միասին՝ մտքերը
խաղաղացնելու համար, մեկնեցին հայ-լուսա-
ւորչական թեմի կառավարիչը՝ հայ և թուրք
երկու պատուաւոր անձերի հետ միասին: Տեղ
հասնելուն պէս նրանք դուրս եկան սկսեցին ազ-
գաբնակչութեան հետ, իսկ հետեւալ օրը մտա-
ծում էին հաշտեցնել երկու կողմերը և դուրս
գալ շրջակայ գիւղերը մանգալու: Այդ մասին
խորհրդակցելու ժամանակ, երեկոյեան ժամը
9-ի մօտերը, քաղաքում սկսվեցին որոտալ
զէնքի ձայներ: Այդ աղմուկի ձայնին դուրս
գալով, խորհրդին մասնակցողները փողոցում
պատահեցին պահապան զինուորներին ժա-
նդարմական մի ունտէր-օֆիցերի և մի զօր-
գովոյի հետ միասին, որոնք բռնել էին փախ-
չող և դէնք կրակող երկու հայերին, որոնց
մօտ գտնվել էին երկու ասորական, եր-
կու ուսմը, դաշոյն և դանակ: Մայիսի
12-ին, առաւօտանից զօրեղ հրաձգութիւն
սկսվեց: Ազգաբնակչութիւնը բոլորովին դուրս
եկաւ հնազանդութիւնից: Որովհետև տեղում
ոստիկանութիւնը և զօրքերը քիչ են, Երեւա-
նից նոր կառուցվող երկաթուղով զօրք ու-
ղարկվեց անկարգութիւնը ճնշելու համար:
Մալիւս գիւղում գիւղերով մորթոտել են մի
հայ ընտանիք, այդ պատճառով էլ այնտեղ է
մեկնել Նախընտանի հայ վարդապետը: (ԿԱՅԻ.)

ԲԱՑ ՆԱՄԱԿ ՀԱՅ-ԿԱԹՈՒՆԻԿՆԵՐԻՆ
Ներկայումս, երբ հովիւսի անկէններէն
հաւաքվել են Թիֆլիսում հայ-կաթողիկոսի
կրօնական և աշխարհական պատուաւորները
հովիւսում եպիսկոպոսական աթոռի և այլ
կրօնական հաստատութիւնների բացման հար-
ցի առթիւ կառավարութեան խնդրամատոյց
լինելու համար, խնամ ցանկալի է, որ պատ-
գամաւորները ժողովը, օգտվելով այդ հա-
ղաւորաւ հանգամանքից, ի միջի այլոց որո-
շում կայացնեն միջնորդելու կաթողիկոսեան
խնամութեան (Կ. Պօլսի պատրիարքի, պապի)
առաջ հետեւեալի մասին:
Լինելով ազգով մի, լիզուով մի, կրօնով և
արարողութեամբ (ի բաց առեալ Հոռի գեղ-
իշխանութիւնը ճանաչելու և մի քանի ղօգմա-
ներ) համարեալ զուտ հայկական, Հայկազ գա-
ւակները մի մասը երբեմն գտնում է իրան
շատ անախորժ դրութեան մէջ, երբ կարել է
զգացվում նրա, իբրև հայ-կաթողիկոս համայնքի
մասնակցութեանը հայի վշտի և ուրախու-
թեան մէջ: Երբ հայոց Հայրապետը այցելում
է մի քաղաք, որի հայ-կաթողիկոս համայնքը,
զուտ ունենալով իր առաջնորդին, իրմաւո-
րելու է նրան հայի եկեղեցու առաջ, ներս
մտնելու և «մաղթանքին» սոսկ մասնակցելու,
կաթողիկոս կղերը հանդէս է գալիս իր անհա-
մարտութեամբ «չենք կարող ներս մտնել ե-
կեղեցի, վառել դի փիլոն կը տան»։ Երբ հայի
կաթողիկոսը, կամ որ և է նշանաւոր գրական
գործիչը մեռնում է, կաթողիկոս համայնքը
զրկված է լինում իր վերջը արտայայտելու, մի
հոգեհանգիստ կատարելու հնարաւորութիւնից,
որովհետև մեռնողը կաթողիկոս չէ: Երբ հային
այցելում է Բագուի նման պատուհասը, կա-
թողիկոս կղերը քաղութիւն է ունենում աւելորդ
անգամ երեսով տալու, որ չէ կարող ոչ մի-
այն գտնվել հայ եկեղեցու օրթօքօքս և մահ-
մեղական հոգեւորականներին հետ միասին, այլ
և առանց ի վերուստ թոյլաւորութեան հոգեհան-
գիստ կատարելու կոտորված հայ եղբայրների
համար, մինչդեռ, երբ հարցը վերաբերվի մի
լեհ, Ֆրանսիացի, իտալացի և գերման կաթո-
լիկի—ինչքան է որ ուղում էր:
Անհրաժեշտ և կարուկ միջոցներով ընդմիջու
վերջ դնել հայ-կաթողիկոս ամաչեցնող և նրա
խիղճը ծանրաբեռնող տխուր երևոյթներին,
որոնք ամեն քայլափոխում հասկացնել են տա-

իս, իբր թէ մի այլացեղ, բայց կաթօլիկ ան-
հատը, հասարակութիւնը՝ հայ-կաթօլիկին ա-
ւելի մօտ է իր հայրից: Ժամանակ է, որ հայ
կաթօլիկ կղերը, զեկազարկելով և ներկայ
կեանքի պահանջներով, հնարաւորութիւն տալ
կաթօլիկ հային «եղբայր ենք մենք»-ը ապա-
ցուցանելու գործնականապէս իր միայնակ ե-
կեղեցական բեմից: Մօտիկից ճանաչելով հայ
եկեղեցին, հաւատացած եմ, որ նա առանց
փոխադարձութեան չի թողնի մի ժամանակ իր
հարազատ զաւակների բայելը և իր կողմից
ևս կը ձգէ քարեր լեցնելու մեզ իրարուց բա-
ժանող վիճը: Պէտք է, որ առաջինը մենք,
քչուորներս, ձեռք երկարենք: Արեւը ուրեմն
այդ բայել յարգելի պատգամաւորներ, համոզ-
ված լինելով, որ սուլթանների արեւատու-
թեան համար մաղթանքներ թողարկող կա-
թօլիկ բարձր իշխանութիւնը չի գտնի ար-
գելներ մեր վրա բարդված պարտականու-
թիւնները դէպի մեր արմատը կատարելու
գործում:

Հայ-կաթօլիկ Մատթէոս Մուրայան

Ս Ն Ի Ռ Ի Ռ Ի Ա Կ Ա Ն Ը
(Նամակ Երևանից)

Ան ուրուականը դեռ կանգնած է մեր դէմ
յանդիման և հազիւ թէ այնքան էլ շուտ չբա-
նայ մեր տխուր կեանքի մասը՝ հօրեղծից:
Բազում կոտորածներ և երևանի արեւմտ
ընդհարուցների սարսափները դեռ ևս չեն
անցել և ահա հասնում են ընդհարման լուրեր
հայերի և թուրքերի մէջ Նախիջևանից և նրա
ընկերակցներից: Նրանք առ այժմ մեծ չափեր
չեն ընդունել, բայց այն սարսափը, որ տի-
րում է իւրաքանչիւր չնչին այդպիսի դէպքի
հետ միաժամանակ և ցեղային ընդհարուցների
և նրա կործանիչ հետեւանքների սարսափը,
որը որպէս կօշտար ճնշում, խեղդում է մեզ,
ահա այդ է ստակալին: Նախիջևանից հասած
հեռագիրները այս պատկերն են տալիս: Ամ-
սիս 6-ին քաղաքից դուրս գտնվում է մի
թուրքի դիակ, մի շատ սովորական երևոյթ,
սակայն այդ սովորական երևոյթին տրվում է
մի այլ նշանակութիւն, որ իբր թէ այդ կա-
տարել են հայեր և ահա միւս օրը քաղաքը
մէջ հրապարակով պարսկները սպանում են
մի հայի: Այս այնպէս բացայայտ է կատար-
վում, որ հայերը խառնութիւնը փակելով տուն
են քաշվում և անմիջապէս հեռագրում Երե-
ւանում եղող ազդեցիկ մարդկանց:

Անմիջապէս խփվեցին հեռագրեր համերաշ-
խութեան յորդորներով և գնաց այստեղից
Գարեգին վարդապետներ: Երէկ, ամսիս 3-ին,
նորից հեռագիրը լուր բերեց մօտագայ մի
գերդուռ մեզի ունեցած ընդհարման և մի
երկու երեքի սպանման և վերաւորման դէպ-
քերի և քաղաքում առաջացած յուզմունքի
մասին: Այսօր այստեղից մեկնեցին դէպի
Նախիջևան փոխնահանգապետը, Երևանի քա-
ղաքապետը, նաև Նախիջևանի քաղաքապետը
Ջաֆար կուլի խանը, որը այստեղ էր գտնու-
ւում:

Բայց ինչու այս բոլորը, միթէ՞ քիչ են
պատահել սպանութիւնների հայերի և թուր-
քերի մէջ, այն էլ աւելի մեծ չափով: Հէնց
երէկ չէր, որ Գիւլարե-Երևանից ոչ հեռու-
գերդուռ նոյալին վէճի ատիթով երկու կողմից
սպանվեցին և վերաւորվեցին մի քանիսը:
Կրկնում ենք, Նախիջևանի դէպքերը առ այժմ
մեծ չափեր չեն ընդունել և նրանք իրանց
ծաւալով աննշան բաներ են, սակայն նրանք
այսօր իրանց թողած սարսափի ուժով և
անվստահութիւններն ու գալիք ընդհարում-
ների ծանր մտատանջութեան պատճառով
ներկայանում են որպէս մի ընդհանուր ա-
ղէտ, որը կարող է բռնկվել և մեծ չափեր
ընդունել, որի դէմ կանգ է առնում մարդու
ուղեղը, նա դադարում է գործելուց և նրա
հետ միասին քարանդակ է նաև կեանքը:

Կարողանալէ՞ք երևակայել այն սոսկալի
ապաւորութիւնը, որը տիրում է ընդհարման
նախադրական վայրկեաններում. այդ ապա-
ւորութիւնը սոսկալի է մանաւանդ, երբ նկա-
տում էք, որ դուք գործ ունեք ձեր հարեանի,
դարեւով ձեզ հետ կապված դրացու հետ:
Ճշ նորից կանգ էք առնում ու հարց տալիս
է սոսկում: Մտածում էք և հաշտվում այն
միջոցաւորութիւնները, որը ստեղծվել է մեզ
համար, որը սատանաներ է ծնում իր խառ-
նակիչ ուղով: Ապա մենք, միմեանց միս ու-
տոյներս, մտածում ենք մի վարկեան մեր
ոտիներին մասին, մտածում ենք, որ մուսա-
տանը նոր հոգիներ շրջանումն է գտնվում,
որ Կովկասը վերածնվելու վրա է, որ ամեն
մի խլացի ժողովուրդը սպասելիքներ և ստա-

նալիքներ ունի. որ մեր երկիրը զեմամութիւն
և այլ արտօնութիւնների անհրաժեշտութիւն
ունի, որ եթէ մենք մեզ համար ներքին
երկառակութիւն ենք ստեղծել, ապա ով կը
տա մեզ արտօնութիւն: Արդե՞ք մենք մտա-
ծում ենք այդ...

Ա. Դ. Ե.

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՇՈՒՇՈՒՄ

(Նամակ Շուշուց)

Ձը կարծեմ թէ այս բազէիս մի բախտա-
գուրկ անկիւն լինի Կովկասում իւստան կող-
մից, ինչպիսին Շուշին է:

Շուշին չունի մի հատ իգական գիմնազիա,
չունի նոյն իսկ ստորին կարգի օրիորդաց ու-
սումնարան, որտեղ նրա հաղաւոր աղջիկ-
ները գոնէ հասարակ գրագիտութիւն սովոր-
էին: Մարինսկի ուսումնարանը վերջին տա-
րիներս այնքան ընկած է, որ նրա աւարտող-
ները մի մի ողորմելի, անգրագիտ տիպեր
են ներկայացնում: Այդ թշուառները 80%
մասնվում են ծնողական անտարբերութեան,
տանու գործերին՝ գլխաւորապէս միջոցների
պակասութեան պատճառով և ժամանակի ըն-
թացքում ստանում են սովորած այբուբենը,
իսկ 20% միայն միջոց է ունենում գնալ Բա-
գու, Թիֆլիս և գիմնազիա մտնել: Բանի ան-
գամ հարց է եղել Շուշում գիմնազիա բանա-
լու, կամ մարինսկի ուսումնարանը գիմնա-
զիայի վերածելու, բայց հարցը մնացել է միշտ
հարց և տխուր իրականութիւնը մեր աչքի ա-
ռաջն է: Այս բազէիս մենք ունենք դրսում
սովորող առնուազը 30—40 աղջիկներ, որոնց
ամեն մէկը իր ծնողի վրա նստում է տարե-
կան 400 ռ. պիւս 12—16 հազար ընդլի, մի
գումար, որ Շուշում գիմնազիա պահելու հա-
մար ամենախոշոր տեղը կարող է բռնել:

Իգական գիմնազիայի հարցը Շուշում լուծ-
ման չեմք վրա է Գլխաւոր արգելքը ներթա-
կանն է, աւելին՝ տան հարցը: Ամօթ շուշ-
ցիներն, որ չենք կարողանում այդ արգելքը
վերացնել, եթէ մենք հարցը չը պատէինք
մեր քաղաքի անուշով միայն գոյութիւն ու-
նեցող դուստրի դուռը, որտեղ տարիներ շա-
րունակ նա խեղդում է մնում և մի քիչ տաք
կերպով կպչէինք գործի, մենք վաղուց իգա-
կան գիմնազիա կունենայինք:

Նոյն և աւելի աչքի ընկնող տեղ է բռնում
մեզանում թե՛մ. դպրոցի խնդիրը: Ինչպէս յայտ-
նի է, Դարաբաղի բազմահազար հայ ժողովուրդի
միակ հոգեւոր կրթական այդ հիմնապնդները
թիւր զեկուցման մի հարուածով փակման չա-
րախաւս միջակերն ենթարկվեց և 6—7 հա-
բեր մանուկներ դպրոցից փողոց նետվեցին:

Միակ յոյրը Կովկասի նոր փոխարքայ կոմս
Վօրոնցով. Դաշկովի վրա է:—Նրան են սպանում
հոգեւոր կրթման պատրաստվելու ձգտողները,
որ նա իր հոսովու խօսքով հրամայէ բանալու
փակված դպրոցի դռները և ցրելուցան մա-
նուկներին ներս կանչելու՝ դէպի ուսում, դէ-
պի բարոյակրթութիւն:

Իսկ մեր ուշադրանքն ուսումնարանը...: Նա
ևս դատարկած է, որ աւելի կատարեալ է
դարձնում Շուշին, այսպէս ասած, անուշով
նուրբան մատնելով: Մի քանի տաք տաք խըմ-
բուններ, պատգամաւորութիւն, քննութիւն
և այլն չը կարողացան հարթել գործը և մեր
տղաները դարձեալ մնացին փողոցում:

Տ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ՆԻՍԻՏՈՒԹԻՒՆ

(Օպերային ներկայացում.—Նափօրակայեա Գուրայի-
սում.—Աղբիւնէյա եղբայրների ներկայացումները)

I
Այսօր, շաբաթ, մայիսի 14 ին, Թիֆլիսի
արքունական թատրոնում, տեղի կունենայ
օպերային ներկայացում, կազմված հինգ օպե-
րաներից, այն է Գլինկայի «Կեանքը թագա-
ւորի համար», Վերդիի «Տրափալտա», Գունոի
«Բօմէո և Զուլիետտա», Չայկովսկու «Եւգենիյ
Օնեգին» և Պրիկովսկու «Եւգենի»:

Ներկայացմանը կը մասնակցեն երգչուհիներ
Պապայան, Արցըրաշիւ, Գալստիան, Գօրը-
Պանկիւտ, Նիկիտակեան, երգչուհիներ Դօնա-
կոյ, Ալեքսեյ և ուրիշներ:

Ներկայացման սկզբին, թաղադրութեան տօ-
նի պատճառով, կը կատարվի Կայսերական
հիմն:

II

Դերասանուհի տիկին Նափօրակայեա Թիֆ-
լիսից ուղևորվել է Գուրայիս մի քանի ներ-
կայացում տալու նպատակով:

Առաջին ներկայացման նա տուել է իշխան
Բարեխաթիսկու «Перекаты» պիեսը, որ ունե-

ցել է մեծ աջողութիւն: Թատրոնը ծայրից
ծայր լինել է եղել. բռնված են եղել բոլոր
տեղերը, ուր կարելի է թրոններ դնել: Գու-
րայիցները ցանկութիւն են յայտնում, որ
Նափօրակայեան տալ այնտեղ մի շաբա ներկա-
յացումներ:

III

Թիֆլիսի արտիստական թատրոնում սկսվի-
ցին Աղբիւնէյա եղբայրների ներկայացումները:
Աղբիւնէյա եղբայրները շատ յայտնի են Թիֆ-
լիսցիներին և սիրված են այստեղի թատրո-
նաւէր հասարակութիւնից: Սակայն առաջին
ներկայացումը, որ տեղի ունեցաւ հինգշաբթի
մայիսի 12-ին, չէր լցրել թատրոնը հանդի-
սականերով թէ սկսված շրջից թէ այդ երե-
կոյ տեղի ունեցած անձերի և թէ հին պիես
ընտրված լինելու պատճառով:

Նաղացվեց «Ուրբէլ Ակօստա» յայտնի պիե-
սը: Բօքերտ և Բաֆայի եղբայրները իրանց
յատուկ տաղանդով ներկայացրին Ակօստայի
և Բէն-Ակիբայի: Ամենից շատ տպաւորու-
թիւն տուող չորրորդ գործողութիւնը հան-
դէս բերեց նրանց դերասանական աչքի
ընկնող կարողութիւնները: Բօքերտ ներ-
կայացնում էր մտաւոր խիղախութեան մի հե-
րոսի, որը սակայն վճռել էր զիջել ժամանա-
կակից հասարակութեան, դրդված անհուն սի-
րուց դէպի Յուդիթը. բայց յետոյ նրա մէջ
գարթնեց բողոքի և անխիղախութեան գու ձայ-
նը: Բօքերտ բնորոշ էր իր շարժումներով,
խօսքերով, ձայնով: Բաֆայի Աղբիւնէյայի ներ-
կայացրած Բէն-Ակիբան պահպանողական մը-
տածողութեան սարսեղմող ուրուական էր:

Հասարակութիւնը վարձատրեց նրանց բոլոր
ծափահարութիւններով:

ՆԱՄԱԿ ԱՆԱՆՈՒՄԻՑ

Մայիսի 9-ին

Բանաւոր և աշխատող դասակարգի գործա-
դուները մեղաւորում էլ սկսեցին երևան գալ
մասնաւոր բնաւորութիւնով:

Անցեալ երկուշաբթի, ապրիլի 25-ին գոր-
ծադուր արին քաղաքիս յայտնի երկաթգործ
Առ. Միլոնիանի պայտ ու մեկ շինող բոլոր
դարբիններն իրանց բանտրներով ու աշխա-
կերաներով: Թւով մօտ 120—140 մարդ: Դը-
րանք պահանջում էին աշխատութեան վարձի
աւելացում: Այդ դարբինները մինչև այսօր
աշխատում էին պուշի վարձաւոր և իւրա-
քանչիւր մի պուշ մեկ շինելու համար ստա-
նում էին միայն 2 ռ. 80 կ.: Օրական, եթէ
լաւ աշխատեն, մի «դագաֆում» (դնդանի
վրա) մի վարպետ, երկու բանտրով և մի
աշակերտով հազիւ կարողանում մի պուշ մեկ
պատրաստել, ուրեմն 4 հոգու օրական ընկնում
է մօտաւորապէս 2 ռ. 80 կ.: Իսկ որովհետև
լինում են, բացի կիրակի և տօն օրերից, և
այդպիսի օրեր երբ երբ անտարբերեց մէկի բա-
ցակալութեան կամ երկաթ պատրաստ չը լի-
նելու պատճառով չեն աշխատում, ամեն մի
վարպետին միջին թւով ընկնում է հազիւ
60—80 կ., իսկ բանտրներին և աշակերտ
ներին աւելի քիչ: Ձը կայ մեղաւոր մի աւե-
լի դժուար և ծանր արհեստ, քան դարբնու-
թիւնը: Այսօր մեր բոլոր դարբիններն էլ աշ-
խատութեան ծանրութեան պատճառով մաշ-
ված, նիհարած և կատարեալ կմախք դարձած
մարդիկ են: Բարեբաղդաբար պ. Միլոնիան,
զգալով իրանց ծանր դրութիւնը, յարգեց նը-

րանց խնդիրը և պուշի վարձը 2 ռ. 80 կոպէ-
կից դարձրեց 3 ռ. 20 կ., 3 ռ. 40 կ., նայած
ապրանքի տեսակին, այսինքն պուշը 40 և 60
կ. աւելացրեց: Դարբինները կրկին սկսեցին
աշխատել:
Առանց գործադուլի, մի խնդրագրով դիմել
էին քաղաքիս բոլոր արծաթագործներին բան-
տրներն ու աշակերտները իրանց հաճախի
«ուստաբաշուն» (աւագին), պահանջելով օրե-
կան 15 ժամ աշխատութեան փոխարէն 12
ժամ աշխատանք, այսինքն 7-ից մինչև երե-
կոյեան ժամը 7 ը: Շատ համեստ և միայնա-
մայն ընդունելի պահանջ: Միևնու հիմա այդ
արծաթագործների բանտրները ու աշակերտ
ները (թւով 100-ից աւելի) առաւօտեան վաղ
սկսած մինչև երեկոյեան ժամը 9-ը անընդհատ
գլուխները կախած աշխատում էին, իսկ դրա
փոխարէն բանտրները ստանում էին չնչին
վարձ, իսկ աշակերտները բոլորովին անվարձ,
այն պատրուակով, որ արհեստ են սովորում:
Եւ գիտեմ այնպիսի արծաթագործներ, որ ի-
րանց բանտրին մի քաղ ազատ չեն թողնում
և եթէ բանտրը ընտանեկան հանգամանքների
պատճառով կէս ժամ ուշանայ, վարպետը իս-
կայն կը հաշւէ նրա ստացած ուճկին: Վերջա-
պէս այդ բանտրների և աշակերտների հա-

մաստ պահանջներն էլ ընդունվեցին և այժմ
աշխատում են առաւօտեան 7-ից մինչև երե-
կոյեան ժամը 7-ը, օրեկան 12 ժամ:

Ահա մի շաբաթ է, որ գործադուլ էին արել
քաղաքիս կօշկակարների բանտրները և աշա-
կերտները, պահանջելով իրանց վարպետներից
վարձի աւելացում և աշխատութեան կրճա-
տում: Մօտ մի շաբաթ գործադուլ անելուց
յետոյ, նրանց պահանջներն էլ մասնաւորապէս
ընդունվեցին և այժմ սկսեցին աշխատել: Գոր-
ծադուլ էին արել քաղաքիս ապարանքների
(3 հատ) գրաշարները և ծառայողները և այլ
արհեստավորները: Լսվում է և ուրիշ գործա-
դուլների մասին,

Ապրիլի 25-ին, նշանակված էին մեր քա-
ղաքային 4 դատեան ուսումնարանի աշակերտ-
ների տարեկան ըննութիւնները: Սակայն այդ
օրը աշակերտները գալով, յայտնեցին ուսում-
նարանի տեսչին, որ այս տարի իրանք ըննու-
թիւն չեն տալ. և պահանջեցին տարեկան
ստացած թւանշանների համաձայն փոխադրել
իրանց դասատուից դասատուն: Իրանց այդ
պահանջը և ցանկութիւնը առաջ տանելու
համար աշակերտները սկսեցին անկարգու-
թիւններ անել և ապակներ կտրատել: Ու-
սումնարանի վարչութիւնը արձակեց աշա-
կերտներին յայտնվելով, որ այդ մասին կը
դիմէ Թիֆլիսի դերեկտօրին: Մի քանի օրից
յետոյ պատասխան ստացվեց Թիֆլիսից, մեր-
ժեւ աշակերտների պահանջը և անպատճառ
ըննութիւնների կտրատել իսկ չը համաձայնող
և ըննութիւնն չը տուող աշակերտներին ար-
ձակել ուսումնարանից: Ուստի միւս երկու-
շաբթի, մայիսի 2-ին, կրկին նշանակվեցին
աշակերտների ըննութիւնները:

Խ. Դ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կովկասի ոստիկանութեան հրամանատար,
Կովկասեան փոխարքայի օգնական գնդարա-
մայօր Ե. Ն. Շերինկինը մայիսի 11-ին, երե-
կոյեան գնացքով մեկնեց Թիֆլիսից Բաքու:

Ինչպէս յայտարարութիւնների բաժնում
տպված է, «ձրի և էֆանադին» ճաշարաններ
օգտին տրվում է Ժողովարանի ամսաբախ
չէնքում դրօսանք: Աչքի առաջ ունենալով
ձրի և էֆանադին ճաշարանի ահագին կարիքը
աղբատ ու չքաւոր աշակերտութեան համար,
կարելի է յուսալ, որ հասարակութիւնը չի
զլանայ իր նպատակը այդ օգտակար հիմնա-
կութեան և առաջիկայ կիրակի օր կայցելէ
նրա օգտին տրվելիք դրօսանքը:

Ամսիս 12-ին քաղաքային դումայի նիստում
քաղաքապետը յայտնեց, թէ ինչ է արված
զեկագործների և զեղատան ծառայողների մէջ
ծագած վէճերը հաշտութեամբ վերջացնելու
համար: Մտաւորները համաձայնվում են ի-
րանց պահանջները յանձնել միջնորդ դատա-
րանին և դիմել անմիջապէս գործի, սակայն
զեկագործներից չորսն անհամաձայնութեան
պատճառով գործը գլուխ չեկաւ, ուստի ծա-
ռայողների գործադուլը շարունակվում է:
Վճուկեց, գործադուլին շուտով վերջ դնելու
համար, որ դուստն էլ իր կողմից ազդեցու-
թիւն գործ դնէ թէ մէկ և թէ միւս կողմի
վրա:

Նախիջևանի երկաթուղու գծի վրա, 24—135
վերստ տարածութեան վրա, հայ և թուրք
բանտրները, Նախիջևանում տեղի ունեցած
անկարգութիւնների պատճառով, գործը դա-
դարեցրել են և ցրվել իրանց տները:

Մայիսի 6-ին, ասում է «Ե. Ա.» լրագիրը,
Վլադիկաւկազում մի հսկայական ցոյց տեղի
ունեցաւ, որին մասնակցում էր 3000-ից աւե-
լի մարդ: Ցոյցն սկսվեց առաւօտեան ժամը
10-ից, երբ մի խումբ գործակատարներ, դա-
շարներ և բանտրներ պահանջեցին փակել
խանութները: Գործակատարներին միացան
ուսանողները, կուրսիստանները և բազմաթիւ
կողմակի անձեր: Ցուցարարները պահանջե-
ցին «Ваше» լրագրի տպարանում դադարե-
ցնել աշխատանքները: Յետոյ նրանց պահա-
ջով կառապաններն ու դրօշապաններն և
գործերն ընդհատեցին ու հեռացան փողոցնե-
րից: Նրանցից շատերը միացան ցուցարարնե-
րին: Կօշկակարների, սափրիչների, ատաղձա-
գործների և ուրիշ արհեստանոցներում աշխա-
տանքները դադարեցրին. ընդհատվեց էլեք-
տրաբաղի շարժումը: Ցուցարարները, բողո-
թիւն անդադար ածում էր, շարժվեցին դադա-
րեց դուրս, դէպի ծծմբաթիւն պատրաստելու

ձեռքի միջոցով կը ներկայացնէ մեծ պատու-
թիւններն յայտագիր Շվեդիայի դրոշման
վերաբերմամբ այդ ընդհանրական մէջ ունիայի
առիթով, սակայն մտադրութիւն չը կայ խնդ-
րել պետութիւններէ միջամտութիւնը:

ԻՇԻՄ, 12 մայիսի: Իշխման գաւառում
հիմնվում է իւղադրութեան անագին զըպ-
րոց երկրագործութեան միջնատրութեան մի-
ջոցներով, որը բաց թողնել 24,000 բուրբի:

ՕՐԻՇՍՍ, 12 մայիսի: Արտասահմանի ռ-
լրագրիներէ հաղորդած տեղեկութիւնը Օդէ-
սայից կատարելապէս սուտ է, ոչինչ չարդար
և գործարաններէ հրդեհումներ Օդէսայում չեն
եղել:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 մայիսի: Մեծ Իշխան
Պետր Նիկոլայիվիչ ճանապարհ ընկաւ Վի-
բորգ:

ՎԱՐՇԱՎԱ, 13 մայիսի: Կայացաւ Ռիմսկի-
Կորսակովի «Պան Վոեվոդա» օպերայի առա-
ջին ներկայացումը: Օպերան սիրով ընդուն-
վեց հասարակութիւնից:

ՀՕՆԳՐՈՆ, 12 մայիսի: Հեռագրիները Մա-
կաօից հաստատում են, որ «Սոսիէն» շոգե-
նաւը տեսել է մայիսի 9-ին 12 պատերազմա-
կան նաւեր Զինական ծովում, Հոնգկոնգից
140 մղոն դէպի հարաւ: Դրանցից ոչ հետո
գտնվում էին 200 ջոնկաներ պաշարեղէնով:

ԿՕՊԵՆՀԱԳԵՆ, 12 մայիսի: Ստոկհոլմում
ցուցակազրկած է բերելներով մի հիւանդ:

ՄԱՆԻԼԱ, 12 մայիսի: Ծովապետ Տրայն չէ
ստացել ծովային պատերազմը հաստատող
լուր: Նա շտապով ուղարկեց ամբիկական
«Յինցինատտի» կրէյսէրը հիւսիսային ուղղու-
թեամբ:

ԼՕՆԴՈՆ, 13 մայիսի: «Տայմս» լրագրի Պե-
կինի թղթակիցը հաղորդում է, որ ան- չի-
նական պայմանագրի մէջ չի վեր ուղի
16-ը պարագրաֆը Բիքմայի մասին, բայց կը
վերանորոգվի Տեանցիներում ստորագրված
1894 թ-ի պայմանագրի բնագիրը:

ՏՕԿԻՕ, 12 մայիսի: Եապոնական իշխանու-
թիւնները ընդհանրապէս չեն ընդունել Զի-
ֆուում, որը գնում էր Մոօփից Շանգհայ ա-
ծուխի բեռով: Անգլիական «Լոնդոն» շոգե-
նաւին արգելված է դուրս գալ Մոօփի նաւա-
հանգստից:

ՏՕԿԻՕ, 12 մայիսի: Պաշտօնական Ռուս-
ները ամբողջութեամբ են կանգնեցրել Միկոն-
գի մօտերը, Վիկտորիայից հիւսիս, բայց
մայիսի 10-ին յետ մղվեցին: Տեղեկով ուսա-
կան հեծելազորի 4 էսկադրոն յարձակվեցին
Տապտունի վրա, Չանչունից 8 մղոն հիւսիս-
արեւմուտը, բայց յետ մղվեցին: Ենթադրում
են որ ներկայումս ուսական էսկադրայի մի
մասը գտնվում է Հայնանի մօտ, իսկ գլխավոր
ուժերը դուրս են եկել Սաղաղ ուղիքի:

ԿՕՊԵՆՀԱԳԵՆ, 12 մայիսի: Իշխանութիւն-
ներն ազդարարութիւն ստացան, որ ուսա-
կան խաղաղ ուղիքի հետ IV էսկադրան կանց-
նի դանիական ջրերով դէպի Հեռուոր Արեւել
յուրանի վերջին նոր ստանդարտ:

ԲԵՐԼԻՆ, 13 մայիսի: Պատգամաւորների ժո-
ղով կուսակցութիւնները մէջ լինելով օ-
րէնքի առիթով կոպրովիս է կնքված:

ՇԱՆԳՆԱՅ, 13 մայիսի: Ռուսական կամա-
ւոր նաւատորմի 7 կրէյսէր երկէ խաբիս
նետեցին Վուդունի առջև, կանխապէս ազ-
դանան չը տալով իրանց գալու մասին: Ռու-
սական նաւերը յանկարծակի ժամանումը
Շանգհայի ջրերը զարմանք առաջացրեց, թէ
և կանխաւ այստեղ պատրաստել էին ուս
էսկադրայի համար անագին պաշարներ:

ԼՕՆԴՈՆ, 13 մայիսի: «Դէյլի Բրոնիկ» Սո-
ֆիայի թղթակիցը պիւզում է, որ ինքը կարող
է հաստատել Ռուսաստանի նոր մարտանաւեր
ձեռք բերելու լուրը, որոնց թոււ 4 զբաւա-
ւոր կրէյսէր և 3 հակաակնանաւեր, որոն-
ցից երկուսը նորագոյն կառուցման: Այդ նա-
ւերը անցնալ շաբաթ Արգենտինայի կառա-
վարութիւնը ծախել է բոլորական կառա-
վարութեանը: 2,000 ուս նավագնացներ մեկ-
նեցին Նոր-Դիվիէն, ուր բոլոր զորակով
լողացող նաւերը պէտք է յանձնվին նրանց
իւր վարձատրութիւնը: Բոլորական ստացել է 5
միլիոն բուրլու երկաթուղիական մատերիւր:
Այդ առևտրի հետևանքները չեն անհանգս-
տացնում, որովհետև Բոլորական չէ միացել
այն պետութիւններին, որոնք խոստացել են
չհղորդութիւն ուս-հագոնական ընդարձակ
դէպքում:

ՊԱՐԻՉ, 12 մայիսի: Խղիվը երկէ Ալէք-
սանդրիայի մեկնեց Կ. Պոլսով դէպի Անգլիա:
— Իտալական պատգամաւորների ժողովը ըն-
դունեց երկաթուղիները յետ գնելու և պե-

տուծեան ձեռքով այդ գործը վարելու ծրա-
գիրը:

ՆԵՐԱԳԵՐԻ ԱԼԵԿՍԱՆԴՐ ԲԱԼԱՆՔԱՐ
Հրատարակչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍՏԱՆԿ ՍԵԼԻԲ-ԱՆԱՍՏԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԵՏՏԵԼԻ ԹԱՏՐՈՆ
Կիւսի, մայիսի 15-ին
օր. Վ. Բ. Գ. Ի. Զ. Ա. Ն. Ը.

Մասնակցութեամբ դերասանուհի Տ. Միլիբանի,
դերասաններ պ. պ. Տեր-Դաւիթանի, Միքայիլանի
և սերորդներ կը ներկայացնէ հայերէն լեզուով

ԽԱՐԱԲԱՆԱ

Կով. 4 գործ. և 6 պատկ. հեղ. Գ. Մունդուկեանցի:
Մասնակցում են. ա. տ. Մէլիքեան, Ա. Արմեան,

օր. օր. Բէգլեանեան, Միլիկեան, պ. պ. Տեր-
Դաւիթան, Միքայիլան, Փորոմեան, Լուչ-
չեան և ուրիշները:

Սկիզբն է 8 1/2 ժամին երեկոյեան:

Տեղերի գները 3 բ. մինչև 25 կ.

Տոմարները վաղօրոք կարելի է ստանալ
Սակայեանցի կանդիտերսկում, իսկ ներկայաց-
ման օրը թատրոնի կասսայում: (հ. շ. կ.)

Լ Ո Յ Մ Տ Ե Մ Ա Ի

Լ Ե Օ

ՄԵԼԻԻԻ

ԱՂԶԻԿԸ

Պատմական Գլխի
ԳԻՆԸ 1 ՐՈՒՐԻԼ 50 ԿՕՊԵԿ:

Ծախվում է 1) հեղինակի մօտ, «Մշակի»
խմբագրատանը, 2) Թիֆլիսի գրավաճա-
ռանոցներում:

Գրավաճառները և գումարով գնողները
զիջում կը ստանան, եթէ գրման ուղղակի
հեղինակին:

Ա Տ Ա Մ Ն Ա Բ Ո Յ Ժ

Ս. Գ. Շերմազանեանց

Ընդունում է հիւանդներին ամեն օր առաւո-
տեան ժամը 9—2 և երեկոյեան ժամը 3—6,
Երեւանի հրապարակ, տուն Արդութեան,
լուսանկար Լալայեանցի բնակարան:

ԲԺԻԿ Ա. Միքայիլեանց

Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, մոր-
թու և վնասական ախտ ունեցող հիւանդներ
ա մինչև օր, առաւոտ. 12—2. երեկոյեան 6—8
Մեծ Վանքի փողոց, տուն Կուլանովի, դեղա-
տան կից: (ա. օ.) 8—80

Բ Ժ Ծ Կ Ա Պ Ե Տ

Բ. Նաւասարդեան

Պ ե ա տ ի գ ո ռ ս կ ու մ ընդունում է
սիֆիլիսի, միզաքանդակի և վերաբուժական
հիւանդ: (ա. օ.) 4—50

Բ Ժ Ծ Կ Ա Պ Ե Տ

Գ. Ա. ՀԱՆՎԵՐԻԴԵԱՆ

Մասնագէտ միզային և սիֆիլիսի բժշկական
հիւանդութիւնները, ընդունում է հիւանդնե-
րին առաւոտեան 12 ժ.—1 ժ. երեկոյեան
6 ժ.—9 ժ.: Կուլիկ, Սեմեովսկայա փ. № 20.
(հ. հ. շ. կ.) 12—30

ԳՈՒՄՈՒՆԻԿԵՐԳ

Գրախառնութիւն վաճառվում են
Գիտք Միլի-Կարագոզեանի

աշխատութիւններն ու հրատարակութիւնները

1. Գ. Մէլիք-Կարագոզեան. «Գիտմանական
օգնութեան ընկերութիւնները Տաւիկ-Հա-
յաստանի համար», 1901 թ., գինն է 35 կ.
2. Գ. Մէլիք-Կարագոզեան, «Գիտմանայի
հայ ուսանողութիւնը, 1901 թ., 20 կ.
3. А. Агаронянц. «Бапо», (библиотека армян-
ских писателей № 1) 1903 г. 20 к.
4. В. М.-ский, Константинопольскія увеселения.
1903 г. 20 к.
5. В. Уманецъ. Современный Бабинъ 1904 г.
50 к.
6. Յով. Կարապետեան. «Քրիստաֆոր Կարա-
Մուրզա, նրա կեանքը և գործունէութիւնը».
1904 թ. 60 կ.
7. Մարգու կազմութիւնը, կազմեց և հրատա-
րակ. Գ. Մէլիք-Կարագոզեան, 1904 թ. 60 կ.
8. Счастья минуты, вальс для фортепиано,
соч. Комаковой 50 к.
- Դիմել՝ Тифлисъ, книжный магазинъ «Гут-
тенбергъ», Г. Галустану. 5—6

Կիրակի, մայիսի 15-ին
Թիֆլիսի Ամարային ժողովարանում է նպաստ
է ժամանակն ու ձրէ ճաղարաններ և թէյա-
տներ ընկերութեան կը լինի

Գարնանային Զբոսանք

Բարեգործական վաճառքով և մանկական պա-
րերկրյութով: Պարտէզում կը լինի հրավառու-
թիւն, կը լինեն նաև:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ 2 ԽՈՒՍԲ

Ուսուցածուներ (սաղաղարներ)

Զբոսանքի սկիզբը՝ ցերեկվայ ժամը 4-ին, իսկ
պարերկրյութինը երեկոյեան ժամը 6-ին:
Հսկիչ ու կարգադրիչ կը լինի պ. Բեգլեանցի:
Մուտքը հասակաւորների համար՝ 30 կ.,
իսկ մանուկների ու սովորողների համար 20 կ.
Եղանակի անսպասելի անագին գնալու դրոշմա-
րը կը յետաձգվի: (շ. կ.) 2—2

Ա Տ Ա Մ Ն Ա Բ Ո Յ Ժ

Լեռն Կ. Կարապետեան

Ընդունում է հիւանդներին այս ամառ Արա-
թումանում: (շ. չ. շ.) 1—2

ԳԻՄՆԱԶԻՄ ԱՌԱՐՏԱԾ

ՄԻ ՀԱՅ ՎԱՐՃՈՒՀԻ

ցանկանում է ընտանիքի հետ գնալ կովկասեան
հանրային ջրերը դասաւորել պաշտօնով: Կա-
րող է պարագիւր ինչպէս բոլոր առաւելակներից,
նոյնպէս և հայերէնից ու երաժշտութիւնից:
Հասցէն՝ Վերմանիսկի փողոց № 6 աջ դան-
դը, կամ «Մշակի» խմբագրատանը: (շ. հ. հ.) 1—5

ՊԵՏԵ Ե ՕԳՏՎԵԼ ԴԵՊԵՏԵ

Ծախվում է շատ է ժամ անտաններ կենտ-
րոնում Մարիամիչ գիւղում, Կարսի նահան-
գում, փայլ կարելու շոգեմեքենաներով գոր-
ծարան 30 ուսանող շոգեմեքենայով ու կաթ-
սանով, 3 հատ սղոցելու դաղաճաներով, երբ
նախարաններով: Ցանկացողները կարող են
գրմել անմաճը և նամակով Թիֆլիսում Մի-
քայիլեան փողոց № 150 Կոստանդին Կոստա-
նեանցին: (շ. կ. հ.) 1—3

Սղաթ, Գեորգ, Հայկ, Գարեգին, Արեգու-
զան (իր հարազատ և որդիներ) կը փնտ-
ռեն իրենց հայրը, Վառայ (Վառայրականի)
Հայոց Ձորի Գլխից գեղացի Սլէքսան մահ-
տնի Յարութիւնեան մահտնի Շահապեան,
որ տան և մէկ տարի հետացել է իր անից:
Ինքը կամ գիտցողը թող տեղեկարարէ, Թիֆ-
լիս, Նիկոլայեանսկայա փ. № 62, խանութ
Գրիգոր Սղաթեանին: 1—4

ԼՅՈՍ ՏԵՍԱԿ «ՄՈՒՐԸ» ԱՍՄԱԳՐԻ № 5-րդը.—ԲՈՎԱՆԻՍԿՈՒԹԻՒՆ

1. Սասունցի Դաւիթ և Մարամիլը, (զբաւորական պօէմա), Լեռն Մանուկեանի:
2. Դեպի Մեծ, Ա. Անարդեանի, 3. Կատուների և մկների կռիւ, (պարական գրականու-
թիւնից), Վ. Փափագեանի, 4. Դասակարգը ժամանակ. եւրոպ. հասարակ. մէջ, Ս. Ե-ի,
5. Բայրոնից թարգմ. Յովհ. Մանուկեանի, 6. Փիլիսոփայ սոցիոլոգ, Միք. Յովհաննիսեանից,
7. Մ. Պէլիքի թարգման, Սղաթ Զօգանեանի, 8. Թիւրքիայի փիւսանները, Ռուբին Բերբե-
րեանի, 9. Հատուած, Կոստ. Յովհաննիսեանի, 10. Ժանապարհորդութիւն թիւր-
քացիների, (Վանք—Շէնգղիւն) 4-ցիւր, 11. * * * Կոստ. Ա. Իսահակեանի, 12. Ուր-
միայից—Սղաթ, Գիւրգուսի, 13. * * * (Նամուկեանի), Ա. Իսահակեանի, 14. Հարաւային Կովկասի
վիճակագրութիւնից Լ. Ս.-ի, 15. Գրական երգերից, Կոստ. թարգմ. Ս. Յովհ. 16. Ռ-
Կատուների նամակները, 17. Շիլլեր, Մարս Դիէլի, գերմ. թարգմ. Ս. Կարապետեանի, 18.
Օրբերէնները, Վիպ Բեգլեանի, 19. Գնադաստիւթիւն և մատենաթանգարանի, —1) Հայոց
եկեղեցական իրաւունք ա. գրիւր. Ն. Վ. Միլիք Թանգեան—Արա. վ. Գլ. 2) Մ. Ա. Պարա-
մեան. «Անթանք».—Տ. 2. 3) Միլիքն Եսայեան, «Երազ».—Չ. 4) Միլիքն Եսայեան. «Մի-
րուրի...».—Չ. Բարթոլոմէոս եպ. Գրիգորեան՝ «Վարդապետ և Ս. Էջմիածնի իրանց
սկզբնական տեղումն են».—* * * 20 Նոր ստացուած գրքեր, 21. Լրաց կեանքից և գրականու-
թիւնից, 22. Թուրք մամուլ, 23. Գեղարուստի Աշխարհից.—1) Հայ հարաւորակաւորութիւնը
Թորոս Ժ. Թորոսեանի.—II) Միք. ազգային երաժշտութիւնը: Տ. Զաւենի.—III) Հայոց
թատրոն: Տ. 24) Հայ հատուածներ, (Նամակ Եգիպտոսից Ա. Բ. Ե-ի:
25. Ներքին Տեսութիւն.—Կովկասցիների հանրագրքեր: Տեղեկութեան և կրօնական
անլրպետներ:—Բարձ. Ուկա զ կրօն համերկութեան մասին.—Ազգայնական և կրօնական շաղ-
կապ.—Նոր ազգութիւնների կազմակերպում:—Հայկական հանրագիր:—Կովկասի փոխարքայի
մուտքը Թիֆլիս:—Հայ, լուս. հոգ. վարդապետ կարգով պատմիչների վերացումը: Թիւրքիայից
եպիսկոպոսական համար էջմիածնի եկող վարդապետների հարցը:—Արեւմտեան 9 նահանգ-
ների մասին Բարձր ուկա: Լ. Ս.:
26. Արաբերի տեսութիւն.—Չեղորոթեան խախտումը Ցրանսիայի կողմից.—Ցրան-
սիայի ներքին գործերը. Տաւրոսի զաւարտութիւնը, եկեղեցի պետութիւնից անջատելու
օրինագիծը ընդութիւնը, Լիւթի գործադուր:—Միջնաւորական տեղի կրկնութիւնը Ուսարաւայում.
անջատման կուսակցութեան պահանջները:—Միջնաւորական փոփոխութեան հաւանականու-
թիւնը Անգլիայում: Լ. Ս., 27. Նամակներ Պարսկաստանից, Գ. Ե-ի, 28. Նամակներ խմբա-
գրութեան, 29. Յայտարարութիւններ, 30. Ցաւելուած. 2-րդ մարտի «Հայի Բարան Անդ-
լիայում», վէպ պարսկ. կեանքից, թարգմ. անգլ. Մ. Կարապետեանի: 17—32

„Թիֆլիսի Առեւտրական Կարապետեան“

անունով Ընկերութեան ֆիրմայի վարչութիւնը, որ վերակազմված է նոյնանուն Ընկերակ-
ցութիւնից, սրանով յայտարարում է ի տեղեկութիւն ընդհանրութեան, որ յիշված Ընկերու-
թիւնը, հաստատված կանոնադրութեան հիման վրա, որն արժանացել է Բարձրագոյն ընտե-
թեան ու հաստատութեան Ցարսկոէ-Սիւրում 1904 թ-ի նոյեմբերի 19-ին,—սկսում է իր գոր-
ծողութիւնները: 1—1

Կ ի Ր ա կ ի, մ ա յ ի ս ի 15-ին, առաւոտեան 10 1/2 ժ ա մ.

Թիֆլիսի քաղաքային տան դահլիճում նշանակված է

Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԾԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Զ բ ա ղ մ ու ն բ ի ա ա ռ կ ա ն ե ռ ն ե ն.

1) Ներկայ կանոնադրութեան փոփոխութիւնը:

2) 3 անգամ, 3 փոխադարձ և վերաւարող յանձնաժողովի 3 անդամների ընտրութիւնը:

Առաջին հարցի վերաբերմամբ կարելի է բոլոր անդամների 1/2-ի ներկայութիւնը:

Կ ի Ր ա կ ի, մ ա յ ի ս ի 15-ին, առաւոտեան 10 1/2 ժ ա մ.

Թիֆլիսի քաղաքային տան դահլիճում նշանակված է

Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԾԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Զ բ ա ղ մ ու ն բ ի ա ա ռ կ ա ն ե ռ ն ե ն.

1) Ներկայ կանոնադրութեան փոփոխութիւնը:

2) 3 անգամ, 3 փոխադարձ և վերաւարող յանձնաժողովի 3 անդամների ընտրութիւնը:

Առաջին հարցի վերաբերմամբ կարելի է բոլոր անդամների 1/2-ի ներկայութիւնը:

Կ ի Ր ա կ ի, մ ա յ ի ս ի 15-ին, առաւոտեան 10 1/2 ժ ա մ.

Թիֆլիսի քաղաքային տան դահլիճում նշանակված է

Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԾԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Զ բ ա ղ մ ու ն բ ի ա ա ռ կ ա ն ե ռ ն ե ն.

1) Ներկայ կանոնադրութեան փոփոխութիւնը:

2) 3 անգամ, 3 փոխադարձ և վերաւարող յանձնաժողովի 3 անդամների ընտրութիւնը:

Լուիզա Դալիդիսի Մա-

<